

COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր

COVID-19-ի դեմ մեզ պաշտպանելու բազմաթիվ պատվաստանյութեր կան, որոնք գտնվում են մշակման փուլում: Մտորն ներկայացված են պատվաստման և COVID-19-ի պատվաստանյութերի վերաբերյալ հաճախ տրվող որոշ հարցեր:

1. Ինչու՞ է պատվաստումը կարևոր:

Պատվաստումը հիվանդությունը կանխելու ապահով և արդյունավետ տարբերակ է: Յուրաքանչյուր տարի պատվաստանյութերը փրկում են միլիոնավոր կյանքեր: Երբ պատվաստվում ենք, մենք պաշտպանում ենք ոչ միայն ինքներս մեզ, այլև մեզ շրջապատող մարդկանց:

2. Ինչպե՞ս են պատվաստանյութերը պաշտպանում համայնքները:

Երբ անձը պատվաստվում է, քիչ հավանական է, որ նա կհիվանդանա կամ կփոխանցի վարակը մյուսներին: Երբ համայնքում շատ մարդիկ են պատվաստվում, ավելի քիչ մարդիկ են մնում մանրէին՝ վարակելու համար, հետևաբար մանրէի տարածումը բարդանում է: Մա կոչվում է համայնքի իմունիտետ կամ <<համընդհանուր իմունիտետ>>: Համընդհանուր իմունիտետը կարևոր է, քանի որ այն պաշտպանում է այն մարդկանց, ովքեր չեն կարող պատվաստվել, քանի որ շատ փոքր են կամ ծանր հիվանդ են:

3. Ինչպե՞ս է աշխատում պատվաստումը:

Պատվաստանյութերը աշխատում են օրգանիզմի իմունային համակարգը նախապատրաստելով մանրէները ճանաչելու և դրանց դեմ պայքարելու համար: Երբ դուք պատվաստվում եք, ձեր իմունային համակարգը արձագանքում է դրան: Այն

- Հայտնաբերում է օրգանիզմ ներթափանցող մանրէն, ինչպիսիք են վիրուսը կամ բակտերիան:
- Ստեղծում է հակամարմիններ: Հակամարմինները հիվանդության դեմ պայքարելու համար իմունային համակարգի կողմից արտադրվող սպիտակուցներ են:
- Հիշում է հիվանդությունը և դրա դեմ պայքարելու ձևը: Եթե պատվաստանյութը ստանալուց հետո վարակվեք այդ մանրէով, ձեր իմունային համակարգը կարող է արագորեն ոչնչացնել դրան, նախքան ձեր հիվանդանալը:

Մեր իմունային համակարգերը ձևավորված են հիշելու համար: Մեկ կամ մի քանի դեղաչափ (դոզա) պատվաստանյութ ստանալուց հետո մենք պաշտպանված ենք մնում հիվանդությունից որոշ ժամանակով: Հենց սա է պատվաստանյութը դարձնում այդքան արդյունավետ: Հիվանդությունը այն պատահելուց հետո բուժելու փոխարեն, պատվաստանյութերը կարող են առաջին հերթին կանխել՝ մեզ հիվանդանալուց:

4. Պատվաստանյութից կարո՞ղ եք վարակվել COVID-19-ով:

Ոչ: Միացյալ Նահանգներում COVID-19-ի դեմ մշակվող պատվաստանյութերից ոչ մեկը իր մեջ կենդանի վիրուս չի պարունակում, որը հենց առաջացնում է COVID-19: Երբեմն պատվաստանյութեր ստանալուց հետո մարդիկ ջերմություն են ունենում, կամ հոգնածություն են զգում շուրջ մեկ օրվա ընթացքում: Այդ ախտանիշները նորմալ են և նշան են այն բանի, որ մարմինը ստեղծում է իմունիտետ: COVID-19-ի պատվաստանյութերի աշխատելու ձևերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [CDC վեբ կայք](#):

Սովորաբար մարմնից մի քանի շաբաթ է պահանջվում պատվաստումից հետո իմունիտետ ստեղծելու համար: Եթե մարդը վարակվի COVID-19 առաջացնող վիրուսով անմիջապես պատվաստվելուց առաջ կամ

COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր

հետո, նա դեռ կարող է հիվանդանալ COVID-19-ով: Դա տեղի կունենա այն պատճառով, որ պատվաստանյութը բավարար ժամանակ չի ունեցել պաշտպանություն տրամադրելու համար:

5. Արդյո՞ք պատվաստման հետևանքով իմ COVID-19-ի թեստը դրական կլինի:

Ոչ: Պատվաստանյութերը պատճառ չեն հանդիսանալ COVID-19-ի հայտնաբերման վիրուսային թեստերի (օրինակ՝ քսուքային թեստը) դրական արդյունք ցույց տալու համար: Ձեր հակամարմինների որոշ թեստեր դրական կլինեն: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստանյութերի աշխատանքի ձևերից մեկը ձեր մարմնին հակամարմիններ պատրաստել սովորեցնելն է: COVID-19-ի թեստավորման մասին ավելին իմանալու համար տե՛ս հանրային առողջապահության [թեստավորման վեբ կայքը](#):

6. Քանի՞ պատվաստանյութեր են առկա COVID-19-ի դեմ:

Աշխարհում ավելի քան 50 COVID-19 պատվաստանյութեր են փորձարկվում մարդկանց վրա: ԱՄՆ-ում լայնամասշտաբ (3-րդ փուլ) կլինիկական փորձարկումների ընթացքում կամավորների շրջանում ուսումնասիրվում են ընդամենը մի քանի պատվաստանյութեր՝ պարզելու համար, թե որքանով են դրանք լավ աշխատում: Տե՛ս [կլինիկական և պատվաստանյութի փորձարկումների](#) ուղեցույցը 3-րդ փուլի հետազոտությունների մասին ավելին իմանալու համար:

7. COVID-19-ի դեմ պատվաստումից քանի՞ ներարկում ինձ կպահանջվի:

Փորձարկվող COVID-19 պատվաստանյութերի մեծ մասը տրվում է երկու դեղաչափով՝ մի քանի շաբաթվա տարբերությամբ: Երկու ներարկումների համար էլ կարևոր է նույն տեսակի պատվաստանյութեր ստանալը:

8. Արդյո՞ք պետք է վճարեմ COVID-19-ի դեմ պատվաստման համար:

Ոչ: Ձեր բժիշկը կամ դեղատունը կարող են վճար գանձել պատվաստանյութը տալու համար, բայց այն պետք է վճարվի պետական և մասնավոր ապահովագրական ընկերությունների կողմից: Բժշկական ապահովագրություն չունեցող մարդիկ կարող են անվճար պատվաստվել COVID-19-ի դեմ: Գրպանից արվող վճարումներ չկան:

9. Արդյո՞ք բավարար պատվաստանյութեր կլինեն բոլորի համար:

Ոչ բոլորը կարող են անմիջապես պատվաստվել: Ծրագրեր են կազմվել այս սահմանափակ պատվաստանյութերը արդար, էթիկական և թափանցիկ ձևով տարածելու համար: Նախ պատվաստանյութը կառաջարկվի առողջապահական աշխատողներին և երկարաժամկետ խնամքի հաստատություններում (օրինակ՝ ծերանոցներում) ապրող մարդկանց: Նպատակն այն է, որ մեծ քանակության հասանելիության պես, բոլորը հնարավորություն ունենան հեշտությամբ ստանալ COVID-19 պատվաստանյութը՝ սա կարող է մի քանի ամիս տևել:

10. Ինչի՞ համար է մեզ անհրաժեշտ COVID-19-ի դեմ պատվաստում, եթե կարող ենք կատարել այլ գործողություններ՝ օրինակ սոցիալական հեռավորություն պահպանել, դիմակներ կրել:

Մենք պետք է անենք հնարավոր ամեն ինչ համաճարակը դադարեցնելու համար: Պատվաստանյութերը ուժեղացնում են ձեր իմունային համակարգը, հետևաբար վարակվելու դեպքում այն պատրաստ կլինի պայքարել վիրուսի դեմ: Մյուս քայլերը՝ ինչպես օրինակ դիմակ կրելը և սոցիալական հեռավորություն

COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր

պահպանելը, օգնում են նվազեցնել ձեր կողմից վարակվելու հավանականությունը և վարակը տարածելու վտանգը: Միասին այս միջոցներն առաջարկում են լավագույն պաշտպանությունը COVID-19-ի դեմ:

11. Եթե ես արդեն վարակված եմ եղել COVID-19-ով, արդյո՞ք ես պետք է պատվաստվեմ:

Այո, պատվաստանյութը ձեզ հարկավոր է, նույնիսկ եթե դուք հիվանդացել եք COVID-19-ով: Մենք դեռ չգիտենք, թե COVID-19-ով հիվանդանալուց հետո որքան ժամանակ կլինեք պաշտպանված, ուստի կարևոր է պատվաստվել՝ ձեր անձեռնամխելիությունն ամրապնդելու համար:

12. Պե՞տք է գրիպի պատվաստում կատարեմ:

Այո՛: Հավանական է, որ ինֆլուենզայի (գրիպի) և COVID-19-ի հարուցիչ վիրուսները տարածվեն այս ձմռանը: Գրիպի դեմ պատվաստումը ձեզ միայն պաշտպանում է գրիպից, բայց դա առնվազն նշանակում է, որ դուք միաժամանակ չեք վարակվի և գրիպով և COVID-19-ով: Սա կարող է հետ պահել ձեզ ավելի ծանր հիվանդությունից: Հիմա գրիպի պատվաստանյութ ստանալն ավելի կարևոր է, քան երբևէ: Եթե հավանական է, որ շուտով ստանաք COVID-19 պատվաստանյութ, ձեր բժշկին հարցրեք գրիպի դեմ պատվաստման լավագույն ժամանակի մասին: Դա պայմանավորված է նրանով, որ հնարավոր է, որ երկու պատվաստանյութերը պետք է կատարվեն մի քանի շաբաթվա տարբերությամբ:

13. Ի՞նչ կարող եմ անել՝ պաշտպանելու ինքս ինձ COVID-19-ով վարակվելուց:

Այլ անձանց միջավայրում գտնվելիս պետք է ծածկեք ձեր բերանը և քիթը դեմքի ծածկոցով, խուսափեք հիվանդ մարդկանց հետ սերտ շփումից, պահպանեք ֆիզիկական հեռավորություն և հաճախ լվացեք ձեր ձեռքերը: Տե՛ս ձեզ համար վտանգը նվազեցնելու [ուղեցույցը](#): Դուք պետք է շարունակեք դա անել նույնիսկ պատվաստանյութ ստանալուց հետո: